ԿԱՐԼ ՎԱՐԴԱՆԻ ՍԵՂԲՈՍՅԱՆ

2009 թ. հոկտեմբերի 12-ին, ծանր հիվանդությունից հետո, կյանքից հեռացավ անվանի գիտնական, ազգագրագետ, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ավագ գիտաշխատող Կարլ Վարդանի Սեղբոսյանը:

Կ. Սեղբոսյանը ծնվել է 1928 թ. հունիսի 17-ին Լենինականում, մտավորականի ընտանիքում: 1953 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը և ստացել պատմաբան-ազգագրագետի որակավորում: Համալսարանն ավարտելուց հետո «Լույս» հրատարակչությունում աշխատել է խմբագիր և թարգմանիչ:

1960 թվականից աշխատել է ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում՝ իր ողջ կարողությունները ծառայեցնելով հայ ազգագրությանը: Հեղինակ է բազմաթիվ գիտական աշխատությունների: Գլխավոր աշխատանքներից մեկը Կ. Սեղբոսյանը նվիրել է իր հայրենի քաղաքի՝ Լենինականի կենցաղին ու մշակույթին՝ հայ ազգագրության մեջ հիմք դնելով քաղաքի ազգագրության ուսումնասիրությանը:

Լինելով փայլուն ազգագրագետ ու մարդկային փոխհարաբերությունների հմուտ գիտակ՝ իր ջանքերի և ունակությունների ներդրման շնորհիվ գրանցել ու սերունդներին է փոխանցել XIX դարի երկրորդ և XX դարի առաջին կեսերն ընդգրկող ժամանակահատվածի եզակի նյութեր, որոնք ներկայացնում էին Ալեքսանդրապոլ-Լենինականի ավանդական հասարակական կենցաղն ու, մասնավորապես, արհեստագործությունը:

Կ. Սեղբոսյանը հետազոտողի իր բնատուր հատկանիշների շնորհիվ կարողանում էր քաղաքային մշակույթը ներկայացնել իր համուհոտով, ինչը, ի դեպ, ազգագրության մեջ շատ դժվար լուծվող խնդիր է և քչերին է հաջողվել իրականացնել:

1969 թ. Կ. Սեղբոսյանը պաշտպանել է «Արհեստավորական ավանդույթները և դրանց արտահայտությունները լենինականցիների կենցաղում» թեկնածուական ատենախոսությունը, որը 1974 թ. հրատարակվել է «Հայ ազգագրություն և բանահյուսություն» ժողովածուի վեցերորդ պրակում: Այդ աշխատությունը, լինելով բազմաթիվ ազգագրական գիտարշավների և աղբյուրագիտական ու ար-

խիվային հսկայական նյութի ուսումնասիրության արդյունք, նոր խոսք էր ոչ միայն հայ, այլև Անդրկովկասի ժողովուրդների ազգագրության մեջ:

Կ. Մեղբոսյանը արհեստագործական մշակույթի տարբեր ճյուղերի վերաբերյալ կատարել է շատ այլ հետազոտություններ և դարձել արհեստներին ու տնայնագործությանը վերաբերող տեսական մի շարք մոտեցումների հեղինակ: Անմնացորդ նվիրվել է իր ժողովրդի նյութական ու հոգևոր ժառանգության ուսումնասիրությանը, դաշտային ազգագրական նյութեր հավաքել ՀՀ գրեթե բոլոր բնակավայրերում, հարևան երկրներում և Ռուսաստանի Դաշնությունում:

Գիտնական-ազգագրագետը մշտապես մասնակցում էր հանրապետական գիտական և հասարակական միջոցառումներին, քննարկումներին, բանավեճերին՝ աչքի ընկնելով սուր դիտարկումներով, հարցադրումներով, համարձակ եզրահանգումներով ու առաջարկած լուծումներով:

Կ. Մեղբոսյանը երկար տարիներ դասավանդել է ԵՊՀ պատմության ֆակուլտետում և ղեկավարել ավարտական բազմաթիվ աշխատանքներ:

Օժտված լինելով կազմակերպչական բուռն ու ակտիվ խառնվածքով՝ Կ. Մեղբոսյանը 1971–1973 թթ. աշխատել է ՀԽՍՀ ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի քարտուղար, իսկ 1977–1979 թթ. եղել է Գիտությունների ակադեմիայի արհմիութենական միացյալ կոմիտեի նախագահ: Եղել է նաև շիրակցիների հայրենակցական միության անդամ և գործուն դերակատարություն ունեցել կազմակերպության կյանքում:

Անվանի գիտնականի, ազնիվ քաղաքացու, լավ ընկերոջ հիշատակը վառ կմնա իր գործընկերների ու մտերիմների սրտերում:

ԱՂԱՍԻ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ